ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 75-Ա/Ք

«30» դեկտեմբերի 2013թ.

ԵՐԵՎԱՆԻ <ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ> ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ <0313>, <0307>, <0310> և <0515> ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2012-2013 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՊԵՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարի 21.07.2006թ. <Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգը հաստատելու մասին> N 638-Ն հրամանով հաստատված կարգի 11-րդ կետը և Երևանի <Մխիթար Սեբաստացի> կրթահամալիրի տնօրենի 2013թ. հունվարի 23-ի N 13-01-014 գրությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Երևանի <Մխիթար Սեբաստացի> կրթահամալիրի 2012-2013 ուսումնական տարվա պետական որակավորող հանձնաժողովների նախագահներ նշանակել.

- Քնարիկ Ասմարյանին՝ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկայի ամբիոնի դասախոս, դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու՝ <0313 Նախադպրոցական կրթություն> մասնագիտությամբ,
- Ֆելիքս Սարգսյանին՝ Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի մարզախաղերի ամբիոնի դասախոս, դոցենտ, ՀՀ վաստակավոր մարզիչ՝ <0307 Ֆիզիկական կուլտուրա և սպորտ> մասնագիտությամբ,
- Աշոտ Ղազարյանին՝ Երևանի Ռ.Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջի երաժշտագիտության ամբիոնի դասախոս՝ <0310 Երաժշտական կրթություն> մասնագիտությամբ,

- Նազարեթ Կարոյանին՝ <Քննադատների ազգային ասոցիացիայի> նախագահ, մշակութաբան՝ <0515 Զարդային-կիրառական արվեստ և ժողովրդական արհեստներ> մասնագիտությամբ:

2. Պետական որակավորող հանձնաժողովների նախագահներին՝ պետական որակավորման քննությունների ավարտից հետո մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել հաշվետվությունները:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել նախարարի տեղակալ Մ.Մկրտչյանին:

/ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆ

?????? ????????
Jan 30 2013 9:53 AM +04:00